դումը Կովկասի դլխին։ Զիմենկելին պատասխանեց համապատասխան արտայայտութիւններով։

Նիստի գործնական մասում Զիմենկելին անդրկովկասեան պատւիրակութեան անունից յայտարարեց, որ բանակցութիւններին իբրև հիմք ընդունւում է Բրեստ-Լիտովսկի դաշնագիրը։ Բայց Խալիլ բէյը վճռական կերպով մերժեց այդ տեսակէտը. Տրապիզոնի բանակցութիւնների խզումից ի վեր նոր դէպքեր էին պատահել, պատերազմ էր եղել Թիւրքիայի և Անդրկովկասի միջև, արիւն էր հոսել, հետեւաբար, անկարելի էր այլեւս զոհանալ Տրապիզոնում ներկայացւած պայմաններով։ Թիւրքիան իրաւունք էր համարում դնել նոր պահանջներ, որոնք ամփոփւած են հաշտութեան նոր նախագծում։ Եւ որպէսզի բանակցութիւնները չձգձգւեն, Խալիլ բէյը տեղն ու տեղը յանձնեց Զիմենկելիին կնքւած մի ծրար, որի մէջ դտնւում էր նախագիծը «հաշտութեան և բարեկամութեան դաշնագրի Թիւրքիայի և Անդրկովկասեան Հանրապետութիւնների համադաշնակցութեան միջև»։ Սրանով էլ վերջացաւ խորհրդաժողովի առաջին — և վերջին — նիստը։

Հաշտութեան նախագիծը բաղկացած էր 12 յոդւածներից և 3 յաւելւածներից և սարսափելի ծանր պայմաններ էր պարունակում ամբողջ Կովկասի, մանաւանդ, Վրաստանի, բայց աւելի եւս Հայաստանի համար։ Վրաստանից առնում էր Բաթումի շրջանը՝ նաւահանգստով հանդերձ, Ախալցխայի դաւառը։ Հայաստանից խլում էին Ալեքսանդրապոլը, Ախալքալաքը, Շիրակի և Էջմիածնի դաւառի մեծ մասը, Սուրմալուն, Ալեքսանդրապոլ-Կարս և Ալեքսանդրապոլ-Ջուլֆա երկաթուղագիծը։ Հայաստան փաստօրէն չէր մնում. հայերին թողնւում էր հազիւ 11,000 քառ. վերստ լեռնոտ տարածութիւն Արագածի և Սեւանի լճի միջև։ Հողային պայմաններից դատ դրւում էին և չափազանց ծանր տնտեսական, առեւտրական, ռազմագիտական և այլ պահանջներ։

Այսպիսով, Թիւրքիան յախտուն թափով մուտք էր գործում Կովկաս և իր ազդեցութեան տակ առնում Կովկասեան Լեռնաշղթայից հարաւ գտնւող բոլոր հողամասերը։ Կարս-Սուրմալու-Նախիջեւան-Զանգեզուր-Ղարաբաղի վրայով միանում էր Պարսկական և Ռուսական Ադրբէջաններին, և Բաղուից նրա առջեւ բացւում էին չչմեցնող հեռանկարներ դէպի Անդրկասպեան Թիւրք-Թուրանական ցեղերն ու կենտրոնական Ասիայի խալամական աշխարհը։ Էնվերների համխալամական ցնորքները իրականութիւն էին դառնում...

Թիւրքական պահանջները զարմանք ու դայրոյթ առաջ բերին ո՛չ միայն վրացիների ու հայերի, այլ և դերմանացիների մէջ։ Մայիս 12-ին զոր. Ֆոն-Լոսովը հեռագրում էր իր կառավարութեան. «Թիւրքական ամէն չափ ու սահման անցած պահանջները՝ անջատելու զուտ հայկական դաւառները, որպիսիք են Ախալքալաքը, Ալեքսանդրապոլը և Երեւանի նահանգի մասերը, աղաղակող կերպով խախտում են Բրեստ-Լիտովսկի դաշնագիրը և նպատակ ունեն բնաջնջել հայերին Անդրկովկասում։ Այսօր երեկոյեան Թիւրքերը վերջնագիր ներկայացրին, որ թոյլ տրւի իրենց զօրքերին Ալեք-